Բ. ՏԱՐԻ   ՆԻՒ ԵՈՐՔ   ՄԱՅԻՍ 15 1892   ԹԻՒ 10

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՅ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ
Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ   Editor — M. S. GABRIEL M. D.
202 W. 23d St., New York.
Տարեկան բաժանեգինն է ամեն երկրաց համար 2 տոլար կամ 10 ֆրանք։
Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արտասահմանի Հայ թերթեր. — Մատենախօսական. Հայաստան, Քիւրտիստան և Միջագետք Շուէի. — Ուղեւորութիւն իմ ի Կիլիկիա և ի Փոքր Ասիա. — Նամակ Կ. Պոլսէն.— Նամակ Խարբերդէն — Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

ՀԱՅ ԹԵՐԹԵՐ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, ԲԱԶՄԱՎԷՊ, ԱՐՄԷՆԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆ, ԴԱՆՈՒԲ, ԱՐԱՐԱՏ, ՀՆՉԱԿ, Լ'ԱՌՄԷՆԻ, ՀԱՅՔ

Օսմանեան և Ռուսական Հայաստանէն դուրս բազմաթիւ եղած են Հայ թերթեր։ Ունիմք Բազմավէպ և Հանդէս Ամսօրեայ, մխիթարեան հանդէսներն ուսումնական։ Դոքա եկամուտ ունեցող վանքերու մէջ հրատարակուելով բաւական աժանագին են (տարեկան 10 ֆրանք,) և այդու դիւրամատչելի են աղքատ (և անընթերցասէր) ժողովրդեան։ Նաև, ինչ որ աւելի գնահատելի է, գրական Դպրոցի կամ ընկերութեան մասնագէտ անդամոց աշխատութեամբ խմբագրուելով՝ այդ հանդէսներ դերազանց լինելու դիւրութիւն ունին։ Յիրաւի «ԲԱԶՄԱՎԷՊ»ն բազմերախտ հանդէս մ'է եղած մեր ազգին համար կէս դարէ ի վեր։ Ցուսամք թէ այդ պատուական թերթի խմբագրութիւն փոյթ կ'ունենայ (որպէս խոստացած է) գալ տարեշրջանէն սկսեալ նոր ուժեր ներս առնուլ, և տալ այնմ այն անհաւասարելի գերազանցութիւն զոր ունէր 30—40 տարի առաջ։

Ուսումնական թերթերուն քով ունիմք աղատական ազգային թերթեր։ «Արմէնիա» այդ կարգի թերթից անդրանիկն է։ «Հնչակ» եկաւ աւելի յետոյ։ Երկուքն ալ մէկ մէկ ընկերութեան կամ կուսակցութեան բերան են։ «Հնչակ» ամիսն միանգամ կը հրատարակուի և իբրև երկրորդական գործ մի կը նկատուի կուսակցութեան ձեռքին մէջ, իսկ «Արմէնիա» կը թուի լինիլ իւր կուսակցութեան գլխաւոր (եթէ ոչ միակ) գործն։ Ջերևիր թէ այն չնչին գումարով զոր ամ բառ ամէ կը հայթայթեն այդ կուսակցութեան համակրողք, կարելի է շատ աւելի բան ընել, մանաւանդ որ նուիրատուութեանց գումարն զգալի կերպիւ նուազած է տարիէ մ'ի վեր։

«Դանուբ» թերթն որ մի քանի ամիս միայն տևեց, չունէր քաղաքական հանգամանք, Միայն ջանաց Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայ գաղթականութիւններն մտել կրթական, ընկերական շարժման, և տուաւ այդ գաղթականութեանց բաւական ուշադրաւ վիճակագրութիւններն։ Յայտնի էր սակայն թէ թերթին սահմանք և ծառայութեան շրջան յոյժ անձուկ էին և չէր կրնար ապրիլ երկար։

Նիւ Եորքի մէջ 1891ին հրատարակուած «Արարատ» թերթն ևս յայտնի պատճառօք չէր կրնար և չկրցաւ շարունակուիլ։ Երբ երեք թերթ երեւին անդ ուր մէկ թերթ հազիւ կրնայ սնունդ գտնել, ի հարկէ երկուքն կը դատապարտուին մեռնելու։ Ծառ մի եթէ չափազանց ծաղիկ տայ, չկրնալով ամենն պտուղ վերածելու համար բաւական սնունդ հասցունել, պտուղք կը վիժին։ Ամերիկայի Հայ գաղթականութիւնն իւր ծաղկանց շատութեան վերայ վայրկեան մի տղայաբար պարծեցաւ, այլ այժմ լաւ կ'ընէ եթէ պտուղ ունենալ աշխատի որպէս զի չամաչէ վերջապէս։

«Հայաստան» թերթն, որ դադրեցաւ, կը հրատարակուէր Փռանսերէն և հայերէն լեզուօք՝ կից։ Դա եղաւ Փռանսերէն առաջին թերթն հայկական դատին նուիրուած, և մատոյց գնահատելի ծառայութիւն։

«Լ'Առմէնի» եկաւ յետոյ նոյն պաշտօն կատարելու։ Եւ որովհետև երկուքն, Հայաստան և Լ'Առմէնի, չափազանց շատ էին անձուկ ասպարէզին կամ մանաւանդ անբաւական սննդին նայելով՝ մին դատապարտուած էր մեռնելու, և մեռաւ «Հայաստան։»

«Հայք»՝ լրագրի և հանդիսի հանգամանք միանգամայն ունի։ Ազգային և տեղական լուրեր և արևելեան թղթակցութիւններ կը հրատարակէ, և սակայն իւր էջերու մէկ մասն կը նուիրէ ազգային մեծ խնդիրներ ծեծելու։ Լուր առնուլ բաւական չէ, այդ լուրեր ուսումնասիրել պէտք է և խորհիլ թէ ինչ պէտք է ընել։ Պարտքն կատարած չլինիր ոք ո'և է բան ընելով այլ պէտք է գտնել լաւագոյն միջոցներն և զայնս ի գործ դնելու իմաստագոյն եղանակներն։ «Հայք» այդպիսի խնդրովք զբաղող հանդէս մի լինիլ աշխատած է, ոչ թէ լոկ լրատու։ «Հայք» Ամերիկայի Հայոց համար չհրատարակուիր լոկ, այլ բովանդակ Հայ Գաղթական Աշխարհին համար։

Այժմ նկատենք թէ արտասահմանի ազգային քաղաքական թերթերն ինչպէս կապրին։

Յայտնի է թէ Կ. Պոլսոյ և Թիֆլիզի մէջ իսկ, այսինքն մեծագոյն հայ կեդրոններու և բազմութեան

մէջ հայ թերթեր մեծամեծ դժուարութիւններ կը կրեն և անոնցմէ յաջողագոյնք իսկ նիւթապէս փայլուն վիճակ երբէք ունեցած չեն։ Դիւրին է դուշակել թէ ո՛րքան աւելի դժուար է թերթ ապրեցունել արտասահմանի մէջ, փոքրաթիւ բաժանորդներով և ձեռքէ թերթ բնաւ չբաշխառելով, վճարող ծանուցումներ սակաւ կամ ոչ բնաւ ունենալով։ Պէտք է միանգամ ընդ միշտ գիտնալ թէ գաղթային հայ թերթ մի բաժանորդագրութեամբ միայն ապրած չէ ցարդ և չկրնար ապրիլ։

Մեք փորձով գիտեմք, և անոր համար այսքան վճռականօրէն կը յայտարարեմք զայդ։ «Հայք» նեղութիւն չկրելու լաւագոյն պայմանաց մէջ հրատարակուող թերթն է· քանի որ խմբագիրն իւր ապրուստ հայթայթելու ուրիշ միջոց ունի և միայն թերթին ծախքերն բաժանորդագրութեամբ պիտի հոգայ։ (Զայս չեմք ասեր պարծենալու մտօք, այլ խնդիրն պարզելու համար։) Թերթն ամենկողմ լաւ ընդունելութիւն գտաւ, և հակառակորդներն իսկ չկրցան չհաւանիլ։ Դեռ անցեալ օր այդ հակառակորդաց մին ըսած էր թէ ուրիշ հայերէն թերթերն հաղիւ աչքէ կանցունէ, բայց «Հայք»ն երկու երեք անգամ կը կարդայ։ Լա՛ւ, բայց այսու ամենայնիւ «Հայք» իւր հրատարակութեան ծախքերն չկրցաւ գոցել անցեալ տարի, և չկրնար գոցել այս տարի ալ։ Թէև բաժանորդաց թիւն այս տարի աւելցաւ, բայց Հայու յատուկ թուլութեամբ ցարդ բաժանորդաց մէկ երրորդն միայն վճարած է։ Բայց երբ ամենն ալ վճարեն, ինչպէս կը յուսամք թէ ալ կը փութան, դի հինգերորդ ամիսն է այս, տակաւին կարեւոր գումար մի բաց պիտի մնայ։

Իմաստուն ընթերցողն կրնայ այս տուեալ փորձառութեան շնորհիւ դատել մեր գաղթային թերթերու տագնապն։ «Հայաստան» թերթն յայտարարեց թէ Հայաստան աշխարհի ինքնօրինութիւն ձեռք կը բերուի երեք տարիէն եթէ օգնեն թերթին հրատարակութեան. և բաւական օգնողներ եղան, ու թերթն շարունակել կրցաւ մէկ կամ երկու տարի։ Շատեր խսաիւ դատապարտեցին թերթին խոստումն իբրև շաղլաթանութիւն։

Մեք այդ շաղլաթանութիւն չեմք ուզեր արդարացունել բայց կը փափաքիմք բացատրել։ «Հայաստան» բաւական բաժանորդ չունէր, չէր կրնար շարունակել, ուստի ստիպուեցաւ ժողովրդեան յոյսերն գրգռել և ի նուիրատուութիւն շարժել։ Մեր ժողովուրդ խակ լինելով՝ չըմբռներ թերթի մի ահագին կարեւորութիւնն և դերն, թերթի մի հրատարակութեան նուիրատուութեամբ օգնել շատ ծանր զոհողութիւն կը թուի իրեն. իւր լուման կուտայ մեծ բաներ ընել խոստացողին, և այսպէս կը ստիպէ աշխատաւորն մեծ խոստումներ ընելու, շաղլաթան լինելու։

Մինթէ քի՞չ նեղութիւն կրեց «Արմէնիա» լրագիրը։ Ո՛րքան դանդաղեցաւ Պ. Փորթուքալեան առաջին տարիներն։ Եւ իրաւունք ունէր դանդաղելու։ Վերջապէս հիմնեց Հ. Հ. Միութիւնն, ազգն ու հայրենիքն փրկելու կոչումով, և այն ատենէն ի վեր թերթն կ'ապրի առանց նեղութեան, դի Միութիւնն «կը նպատէ Արմենիա լրագրի հրատարակմանը։» Այս նպատակ իբրև երկրորդական կամ երրորդական նետուած է էջի տակին տակ· զի հեղինակն փորձառութեամբ գիտէ թէ ժողովուրդն և անդամներն չեն ուզեր նուէր տալ թերթ մի ապրեցնելու համար, չեն հասկնար թէ թերթի մի, լաւ թերթի մի, հրատարակման օգնել հայրենեաց փրկութեան օգնել է· ո՛չ, պէտք է այդպէս չըսես նոցա, այլ այնպէս ցուցնես թէ ուրիշ մեծ միջոցներով մեծ գործողութիւններ կը կատարուին կամ պիտի կատարուին, և անոնց համար է որ դրամ կ'ուզես իրենցմէ։

Մեք կը կարծեմք թէ «Արմէնիա» որ շաղլաթան կոչեց զ«Հայաստան», ինքն ևս նոյն ուղղութեան հետեւած էր թէև նուազ աղմկով։

Եւ կը փութամք յաւելուլ թէ ժողովուրդն իւր ազիտութեամբ և անտարբերութեամբ մղեց զմին և զմիւսն յայդ ուղղութիւն»

Աւելի ալ կ'ըսեմք։ Կ'ըսեմք թէ այն բոլոր նուէրներն զորս ժողովուրդն «Հայաստանի» ըրաւ, այդ թերթի ծառայութեանց արժանաւոր վարձքն էին։ Եւ այն նուիրատուութիւններն զորս «Արմէնիա» թերթին ըրաւ, չեն բնաւ աւելի քան լաւ թերթի մի ընել պարտ է գաղթային ներկայ պայմանաց մէջ։

Լաւ թերթ մի հզօր, մեծ, պատուական գործ մ'է և շատ զոհողութեան արժանի է։ Երանի՜ թէ զայս հասկնար մեր ժողովուրդ, և յայնժամ շաղլաթանութիւնն կը վերջանար։

Այս խորհրդածութիւններ ըրինք որպէս զի կարենանք «Լ'Առմէնի» թերթին նկատմամբ քիչ իսկիլ և շատ իմացունել։

«Լ'Առմէնի» թերթն ալ իւր նեղութիւն ունի անշուշտ· չկրնար չունենալ։ Նորա խմբագիրն շաղլաթանութեան գիմած չէ և չկրնար գիմել։ Արդ ժողովուրդն պատրաստ է ապացուցանելու թէ ինքն բաւական փորձառու և հասուն է այժմ, և նուիրատուութեամբ և այլապէս օգնելու յօժար է առանց մեծամեծ խոստումներ լսելու։

Դեռ ոչ ոք ըսաւ թէ «Լ'Առմէնի» գէշ թերթ է։ Ամեն ով որ կը կարդայ զայն կը հաւնի, կը սիրէ, կը ընդունի։ Բայց քանի՞ բաժանորդ ունի թերթն։ Կը վախեմք թէ թիւն աւելի փոքր լինի քան յոռետեսք իսկ կարեն դուշակել։ Կալկաթայի, Ճավայի և Մանչէսթրի Հայերէն կարեւոր գումարներ յղուեցան «Լ'Առմէնի»ին, և մեք այդ նշան կը համարիմք իրենց հասունութեան և բանիմացութեան։ Քան զամենայն անտարբերներն Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ կը գտնուին։ Սոքա ոչ թէ նուէր չեն տար (բայց ի 120 թալէռի յումարէն որ երկու տարի առաջ Նիւ Եորքի մէջ հանգանակուեցաւ մերնախաձեռնութեամբ,) այլ և բաժանորդ չեն գրուիր։ Ոմանք կը թուին այնքան համոզուած լինիլ անգղիերէն լեզուաւ հայկական թերթի մի կարեւորութեան որ այնպիսի թերթ մի Միացեալ Նահանգաց մէջ հիմնելու իսկ փորձ ըրին։ Զարմանալի բան։ Սկսա անգղիերէն լեզուաւ «Լ'Առմէնի» կատարեալ ձեռնհասութեամբ կատարուած փորձ մ'է, ինչո՞ւ չենք առնուր զայն, ինչո՞ւ անոր բաժանորդ չենք գրուիր, ինչո՞ւ մեր Ամերիկացի բարեկամներուն չենք տար զայն կամ նուիրեր որ կարդան, հասկնան մեր ցաւերն ու պահանջներն։ Ո՞րն աւելի դիւրին է և ո՞րն աւելի օգտակար, նոր թերթ մի հիմնե՞լ աւգի վերայ թէ արդէն հիմնեալն ծաւալելու և պահելու աշխատիլ։ Մեք «Լ'Առմէնի»ի թիւերէն մի քանի հարիւր օրինակ բերել տալով կը ցրուեմք այս միջոցին Ամերիկայի մէջ, թէ Ամերիկացւոց և թէ Հայոց մէջ, այն յուսով որ բաժանորդներն շատանան։ Այդ թերթ գոնէ հարիւր բաժանորդ պէտք է ունենայ Միացեալ Նահանգաց մէջ։ Գինն է տարեկան 2 թալէռ ու կէս, և կը հրատարակուի ամիսն մի անգամ։

Տեսնենք Ամերիկայի գաղթականութեանց մէջ ո՛րքան հասունութիւն կայ։

«ՀԱՅՐ»ի ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԵՐ

Շնորհակալութեամբ կը հրատարակեմք հետեւեալ նուիրատուութիւններն։ Հայրենասէր սմի Փարիզէն 10 թալէռ· երկու հայրենասէրք Կրանա Բափիտսէն մէկ մէկ թալէռ· հայրենասէր սմի Վուսթըրէն մէկ թալէռ հայրենասէր սմի Էլլէնթաունէն 2 թ.

Այս նուիրատուութիւնք եղած են ինքնայօժար, և մեք ոչ միայն բարի գործ մի այլ և հասուն մտքի նշան կը համարիմք զայդ։ Թերթի մի մեծ և փրկաւէտ դերն ըմբռնողներն միայն կրնան զոհողութիւն ընել անոր հրատարակման համար։

Այլ ևս յայտնի է ի փորձոյ թէ «Հայք» այդպիսի օգնութեանց անհրաժեշտ պէտք ունի խմբագիրն իւր կարողութենէ վեր զոհողութեանց չենթարկելու համար

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՐԴԱՍՏԱՆ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԿՈՄՍ ՏԸ ՇՈԼԷԻ

ՓԱՐԻԶ, 1892, ԳՐԱՏՈՒՆ ՓԼՈՆԻ

394 երեսներէ բաղկացեալ այս գրքին մէջ Ֆրանսացի զինուորական Շոլէ երկարօրէն կը պատմէ իւր տպաւորութիւններ զորս հայ մարդիկ և իրք գործած են իւր վրայ Հայաստանի մէջ 1891ի ուղեւորութեան ատեն և այնպիսի համարձակութեամբ և անողորմ խստութեամբ կը դատէ զմեզ որպէս ուրիշ ոև է օտարական՝ որքան գիտեմք՝ դատած չէ :

Շոլէ կոմսն չսիրեր զմեզ, չհամակրիր մեր ցեղին, զայդ ինքն պարզապէս կ'ըսէ : Իւր գիրք պիտի կարդան հազարաւոր օտարականներ և մեր վրայ աննպաստ գաղափար պիտի առնուն : Շոլէ ինչ ինչ կէտերու մէջ մեծապէս սխալած է և մեր մոլութեանց և երկչոտութեան, մեր մատնչութեան և վատութեան նկարագիրն չափազանց սեւ գործած է, այնպէս որ կարելի է ենթադրել թէ ինքն Հայոց ոմանց վարմունքէն չափազանց գարշելով հապճեպով ընդհանրացուցած է իւր դատաստան և ամբողջ ցեղին վերայ տարածած է սեւ մուրն : Բայց սակայն իւր խօսքերու մէջ շատ տխուր ճշմարտութիւն կայ, և այդ խօսքեր հայ հայրենասիրի սիրտն վշտավ կը լնուն : Մեք այդ օտարականի ընդհանուր խորհրդածութեանց կարևորագոյն մասն հոս կը դնեմք իբրև լուրջ ուշադրութեան արժանի, այն յուսով թէ Ֆրանսացւոյն այդ վիրաւորիչ խօսքերն կրնան օգնել ընդմեզ բժշկելու մեր գարշելի ազգային ախտերէն, ազդելով մեզ այն խորին զզուանք զոր պարտիմք զգալ մեք մեր ամօթալի ախտերէն :

«Յետ Պարսից,» կ'ըսէ Շոլէ, «Աղեքսանդրիոյ Յոյնք, յետոյ Հռովմ և իւր լէգէոնք, Բիւզանդիոն և իւր վարձկանք կարգաւ գրաւեցին երկիրն (զՀայաստան) մինչեւ իսլամական յաղթութիւնն, այնպէս որ բազմադարեան ծառայութեան վարժուած լինելով հէք Հայեր երբէք անկախութեան երես տեսած չեն, և զարգացած են իբրև հարկատու կամ ճորտ : Զարմանալի՞ է ուրեմն եթէ այնպիսի քաջ և խրոխտ ցեղերէ շրջապատուած լինելով ամենուստ՝ Հայք արատի պէս կը կենան յԱսիա իրենց վատութեամբ և երկչոտութեամբ, իրենց նենգութեամբ եւ անամօթ երկլեզուութեամբ : Սողալու վարժուած՝ ոչ ևս կարեն գլուխ վեր առնել. միայն լծի ներքեւ ընկճեալ՝ իրենց ողն ծռած է ամեն տեսակ ցածութեան : Երկար ատեն ստիպուած լինելով ապրուստ ճարելու համար կատարել աշխատութեանց դըժուարագոյններն և արհեստից զզուելի տեսակներն, ստացած են ճարպկութեան մասնաւոր յատկութիւններ որով յաճախ հարստացած են, և կը փայլին բարոյական զգացման կատարեալ բացակայութեամբ մի որ ուղեւորին ոչ այլ ինչ կը թողու յետ երկար ճամբորդութեան մի իրենց երկրին մէջ՝ բայց եթէ խորին արհամարհանաց զգացում իրենց բովանդակ ցեղին համար :»

Այս խիստ և անողորմ վճիռ արձակելէ յետոյ կոմսն սապէս կը նկարագրէ Հայոց վարմունքն իրարու հետ.—

«Իրարու նախանձոտ վերջին աստիճան և միմեանց վնասելու առիթ երբէք չփախցունելով, խորապէս պառակտեալ հին ոխութեամբ, Հայք երբէք գիտցած չեն գլխաւոր փնտռել, իրարու միանալ դիմադրելու համար իրենց հարստահարչաց կամ իրենց կացութիւնն բարւոքել ջանալու : Ի քաղաքս կարի հարուստ են, ի գիւղօրէս յետին աստիճան խեղճ, ո՛և է օգնութիւն չեն ըներ միմեանց և Թուրք կառավարութիւնն պարապ տեղ արգիլած է նոցա զէնք կրել, քանզի յիրաւի չպիտի գիտնային գործածել զայնս :»

Ապա հեղինակն բաղդատութիւն մի յառաջ կը բերէ.— «Նախնթաց ուղեւորութեանցս մէջ առիթ ունեցած եմ, կ'ըսէ, այցելել ուրիշ երկիրներ այն ինչ թօթափած զլուծն օսմանեան. սերպիական ու պուլկարական գիւղերու մէջ երեկոյներն կը պատմէին ինձ Մահիկի բռնապետութեան, փաշաներու զօշաքաղութեանց, սոսկալի պատուհասներու և նախնեաց վերայ գործադրուած տանջանաց պատմութիւններն (այսինքն այն ամեն բաներն որք այժմ կը պատահին Հայաստանի մէջ) բայց նոյն ատեն կը պատմէին նաև իրենց քաջութիւն, իրենց կռիւներ, իրենց յաղթութիւններն կամ պարտութիւններն փառաւոր : Եւ ես կը զգայի թէ այդ երկրաց մէջ յաղթեալն երբէք հրաժարած չէր ազատութեան յոյսէն, և թէ, հակառակ աղէտից և նեղութեանց, միշտ մարտնչած էր իւր անկախութիւն և իւր հաւատ վերստին ձեռք բերելու համար : Ասանկ բան չկայ Հայաստանի մէջ. ազգային զգացումն կը տեւէ անդ, կրօնական տարբերութեան շնորհիւ, բայց երբէք բաւական եղած չէ ոև է արդիւնք յառաջ բերելու : Մի քանի դաւակցութիւններ կազմուած են յերկրին, բայց երբէք լուրջ շարժման յանգիլ կրցած չեն. և դեռ անցեալ տարի, Եւրոպացի գործիչներէ մղեալ, Էրզրումի և Սիվազի Հայերէն ոմանք ջանացին թէև միանալ օսմանեան լուծն թօթափելու համար, սակայն և զայն այնպէս քաջ կարգադրեցին որ առանց մէկ հատիկ զունդ կազմել կարենալու և առանց մի միայն քաղաք ոտքի հանել կարենալու, զիրար փոխադարձաբար մատնեցին և իրենց հայրենակցաց վերայ խստութեանց կրկնապատկման պատճառ եղան, տեղի տալով Հարաւային Հայաստանի այժմու կատաղի ճգնաժամուն ընդ մէջ Քրդաց և քրիստոնէից :»

Որպէս զի կազմակերպութեան անկարողութիւնն և անյաջողութիւններն տեղական պարագայից և թուական անբաւականութեան ընծայելով մեք զմեզ արդարացունել չփորձեմք, մեր անգութ դատաւորն հետեւեալն յառաջ կը բերէ.

«Պէտք չէ սակայն կարծել,» կ'ըսէ, «թէ Հայոց համար շատ դժուար պիտի լինէր իրարու աջակցելով ձեռք բերել բոլորովին ուրիշ արդիւնք : Իրենց մօտաւոր դրացիներն, Նեստորականք, ուշադրաւ օրինակ մի են ասոր : 25 էն 30 հազար են նոքա առ առաւելն (մինչ Հայերն իբր 3 միլլիոն են ի Թուրքիա), և ի հարաւոյ Վանայ լճին և միւսուլման երկրի մէջ՝ բռնած են լեռնային գիրք մի զոր անառիկ գործած են : Քան զամենայն մոլեռանդ և աւազակ Քրդերէ շրջապատեալ՝ կրցած են նոքա, մէկտեղուելով, իրենց դրացեաց խելքն գլուխն բերել և շատ լաւ գիտեն, երբ իրենց գիւղերէն մին յարձակում կրէ, երթալ իսկոյն թշնամեաց երկու երեք գիւղերն այրել և իրենցմէ յափշտակուածին կրկինն առեւանգել թէ կին թէ անասուն : Կառավարութիւնն այնպէս լաւ ճանաչած է նոցա արիութիւնն որ չհամարձակիր անոնց մէջ յղել ոև է պաշտօնեայ և գոհ կը լինի տուրքերն՝ և այն ճշդիւ՝ ընդունիլ այլ և այլ թեմերու եպիսկոպոսաց միջոցաւ : Տաւրոսի քրիստոնեայ Ասորիներն, Լիբանանու Մարոնիներն նոյնպէս իրենց արական կացիւք և ընթացիւք և իրենց կորովով յաջողած են ոչ միայն բարւոքել իրենց վիճակ այլ և ձեռք բերել կէս անկախութիւն մի որով կը զարգանան և կը ծաղկին, և յարգելի եղած են ամենուն : Հայերն ընդհակառակն, թէև հարիւրապատիկ աւելի բազմաթիւ, աւելի հարուստ, աւելի կռնակ ունենալով, չեն կրնար և հաւանական է թէ երբէք չպիտի կրնան ոև է բան ձեռք բերել : Նոքա թափուր են պատերազմական ոգիէն, ապստամբութեան զգացումէն որ կ'նար զիրենք վեր բռնել, և երբ այն գիւղերու մէջ ուր ծայրայեղ թշուառութիւն կը տիրէր և ծայրայեղ չքաւորութիւն, կը

հարցնէինք նոյա թէ ինչ ընելու միտք ունին, փոխանակ սպառնալով իրենց բազուկներն մեզ ցուցնելու, փոխանակ խորհելու թէ թերեւս օր մի կարող պիտի լինէին ամենքն ի միասին դէմ դնել զիրենք նահատակող քրդաց, և տեսնալ ի գին իրենց արեան եթէ հարկ լինէր՝ իրենց վշտաց ամոքումն և աստիճան մի ազատութիւն, կը պատասխանէին ահարեկ և անարի՝ թէ Աստուած զիրենք լքած էր և թէ այլ եւս յոյս չունէին. թէ, եթէ իրաց վիճակն այնպէս շարունակէր, պիտի օր մի ձգէին երթային ի Ռուսիա՝ անդ գտնելու համար լաւագոյն ապրուստ և քիչ մի հանգիստ։»

Այս նկարագրութիւններէն յետոյ Շոլէ կը ջանայ ցուցնել թէ Հայերն եթէ Ռուսիա երթալ որոշեն, չարեաց փոքրագոյնն ընտրելու մտօք պիտի որոշեն, քանզի ոչ Ռուսներն կը յարգեն զՀայս և ոչ Հայք կը սիրեն զՌուսս։ Եւ ցուցնելու համար թէ ռուս կառավարութեան քաղաքականութիւնն Հայոց նկատմամբ համակրական չէ, կը պատմէ հետեւեալ կարեւոր դէպքն.—

«Անցեալ տարի,» կ'ըսէ «Էրզրումի յուզմանց միջոցին, երբ Ռուսահայք երեք հազար հեծելազօրաց գունդ մի իրենց մէջ կազմելով Թուրքիա մտնել և Վանայ ու Պիթլիզի նահանգներուն մէջ ապստամբել ուզեցին, յայնժամ նոյն ինքն ռո՛ւս կառավարութիւնն էր որ զօրք յղեց սահմանագլուխն որպէս զի այդ շարժում արգիլէ և լուր տուաւ Բ. Դրան իրեն դէմ դարբնեալ դաւին նկատմամբ։ Բաց աստի, երբ Կարսի և Երեւանի շրջակայից երեւելիներէն ոմանք ուզեցին յուզում յարուցանել, անոնցմէ ութսունն անմիջապէս ժողվեցին և Կարսի միջնաբերդին մէջ փակեցին որպէս զի բոլոր ուրիշներն անոնց հետեւելու գաղափարէն իսպառ հրաժարին։»

Մեք այս անգամ այսչափ կոչում բաւական կը համարիմք Շոլէի խօսքերէն, և զգալ կուտամք թէ օտարականն ինքզինք մասամբ կը հերքէ այս վերջին տեղեկութեանց զօրութեամբ, երբ կը ցուցնէ թէ Ռուսահայք ուզած են Թրքահայոց օգնել 3,000 զօրօք, քանի որ աւելի վերև կ'ըսէր թէ Հայեր իրարու չեն օգներ. Կը սխալի նաև երբ զՀայս անկարող կը համարի զէնք գործածելու, այդ գլխոյ վերայ Թուրք կառավարութիւնն աւելի լաւ տեղեկութիւն ունի։

Որքան ալ որ Շոլէի վճիռներն ամոքեմք առարկութեամբք և բացատրութեամբք տակաւին էապէս և հիմնապէս ճշմարիտ կը մնան անոնք։ Մեք Հայերս հանդէպ օտարաց ստրուկի երկչոտ դիրքն առնելէ զատ՝ իրարու դէմ ալ անիրաւութեամբ մեր ուժեր գործածելու վատթար բնազդումն ունիմք։ Տեսակ մի տարօրինակ արարածներ դարձած եմք, թշնամին կը համբուրեմք և զիրար կը խայթեմք։ Դժբաղդ հպատակութեան արդիւնք է այս՝ կ'ըսեմք, բայց այդու բացատրած միայն կը լինիմք բանն ոչ թէ արդարացուցած։

Քիչուոր եմք, դրամ չունիմք, կռնակ չունիմք ըսելով ահաբեկեալ մնալ մեծ ամօթ է մեզ։ Ոչ Շոլէ և ոչ մի այլ օտարական կրնայ ընդունիլ այդպիսի չքմեղանք. Նեստորականներուն և այլոց կենդանի օրինակները կեցած են զմեզ խայտառակելու համար։

Մեզ խաղաղական և բուռն միջոցներու ոչ մին կը պակսէր եթէ գիտնայինք անձնուիրութեամբ կազմակերպել մեր ուժեր։ Մեր ահաղագոյն թշնամիք ներսէն են, մեր մէջէն ու մեր սրտից խորերէն։

Այն Հայ որ նախանձոտ, քսու, զրպարտիչ և երկչոտ է, այն Հայ որ անամօթին երես կուտայ և վատերուն թեր կ'ելնէ յայտնապէս կամ քօղի տակէ, նա չէ և չկարէ լինիլ հայրենասէր։

Մեր յոյս այդպիսեաց վերայ չէ, այլ այն Հայերու վերայ է որք բոլոր սրտով կ'ատեն Հայուն մոլութիւններն և շարունակ կը պատերազմին իրենց սրտին դէմ, իրենց վատ բնազդմանց դէմ։

Հայրենիք իւր թշնամիներէ դուք պիտի մաքրէք ո՛վ Հայեր, դուք որ ձեր սիրտ կը մաքրէք երկչոտութեան և նախանձու թոյնէն։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՄ
Ի ԿԻԼԻԿԻԱ ԵՒ Ի ՓՈՔՐ ԱՍԻԱ

(Շար. և վերջ տես թիւ 9)

ԿԻՒՐԻՆ

Յուլիս 9ին հասայ ի Կիւրին։ Այս պարտիզաւէտ և ջրաշատ քաղաքս ձորի մի մէջ երկու ժամ երկայնութեամբ և 10 վայրկեան լայնութեամբ շինուած է։ Նեղ և երկայն քաղաք մի։ Ուրիշ բոլոր քաղաքներն զոր տեսած եմ, կամ նստած են, որպէս Բերիա, Այնթապ, Զմիւռնիա, կա՛մ կանգնած են, ինչպէս Զէյթուն, Պէրէճիք, Ակն. իսկ Կիւրին՝ պառկուկ քաղաք մ'է։ Օդն ու ջուրն առողջ են, և ժողովուրդն ալ, առողջ և յաղթ, կանայք եւս Փիզիքապէս լաւ զարգացած, կարմրադեղ և բարձրահասակ են։ Ամեն Կիւրինցի լիւղ գիտէ, շնորհիւ ձորոյն և աւազանացն։

Հոս աղջիկները վաղահաս ամուսնացնել չկայ ինչպէս ի Մարաշ։ Կիւրինի մէջ օրիորդք կ'ամուսնանան ի հասակի 18—20 ամաց։

Երիտասարդաց բազմութեան մի ատենախօսեցի անդ անկախ բնաւորութեան և ինքնայարգութեան վերայ։

Մարաշ, Զէյթուն և Կիւրին մի զմիոյ կից այցելող և ուսումնասիրող անձին շատ պարզ կ'երևի քաղաքի մի աշխարհագրական և տեղագրական հանգամանաց ազդեցութիւնն ժողովրդեան բարուց և զարգացման վերայ։ Մարաշ աղքատիկ և դժբաղդ քաղաք մ'է մեծ ուղիներու գծէն դուրս լինելով, Զէյթուն քաջ և ապստամբ քաղաք մ'է լեռնային և դժուարամատոյց լինելով, և Կիւրին չափազանց բարակ ու երկայն գոլով բազում հակատնտեսական հարկերու ներքև կ'ընկճի — օրինակի համար վարժարան, եկեղեցի շատ թուով պէտք կը լինին որպէս զի տղայք օրն երկու կամ երեք ժամ ճամբորդելու չստիպուին դպրոց երթալու համար։

ԵԱՐԱՍԱՐ

Յուլիս 12ին Կիւրինէն մեկնեցայ դէպ ի Սեբաստիա, և ճամբուն վերայ այցելեցի զԵարասար, որ ի հարաւոյ Սեբաստիոյ, իբր 15 ժամ հեռուն 30 տնուոր գիւղ մ'է։ Դառնապէս կը գանգատէր ժողովուրդն հարստահարութեանց դէմ։ Իբր 12 տարի առաջ (մեր այցելութեան թուականէն) հայ գիւղացւոց հողերուն կէսն կառավարութիւնն ընծա՛յ ըրած էր Չէրքէզներուն։ Ինչ որ մանաւորապէս տարօրինակ կը դարձնէ այս հարստահարութեան օրինակն, այն է թէ գիւղացի Հայերն յափշտակուած հողերուն համար ոև է փոխարինութիւն ընդունած չլինելէ զատ՝ այնքան տարիներէ ի վեր տակաւին իրենք կը վճարեն էմլաքի տուրքն։ Պարզ կրնայ ըսել ընթերցո՛ղ. արդարասէր հայրախնամ կառավարութիւնն Հայ գիւղացիներն կողոպտած է և զող Չէրքէզներուն նուէր ըրած է նոյա հողերու կէսն, և սակայն կը շարունակէ անոնցմէ առնուլ տուրք այն հողերու համար որոց Չէրքէզներն տէր եղած արդիւնքն կը վայելեն։

ՄԱՆՃԸԼԸԳ

Ապա տեսանք զՄանճըլըգ գիւղ

Մեր այցելութենէն մի քանի օր առաջ նշանաւոր դէպք մի պատահած էր։ Չէրքէզ մի (մէհաճիր) ուրիշ Չէրքէզէ աղջիկ փախուցած էր, և ապա հալածուելով Մանճըլըգի մէջ սպանած էր զայն որ իր ետևէն ինկած էր։ Ահա դէպք մի զոր կառավարութիւնն կրնար ամենայն դիւրութեամբ ստուգել մինչև վերջին մանրամասնութիւններն. բայց աւելի շահաւոր սեպեց ամբաստանել բովանդակ գիւղն, իբր թէ գիւղացիք սպաննած լինէին զՉէրքէզն։ Խեղճ գիւղացիք 50 օսմանեան լիրա տալով ազատեցան բարեխնամ կառավարութեան ձեռքէն։

Մեր այցելութենէն ամիս մ'առաջ Չէրքէզներն Մանճըլըքէն 12 եզ քշած տարած էին օր մի յորում բարեբաղդաբար 30 հեծելազօրք կար գիւղին մէջ։ Մանճըլըգցիք զօրաց պետին աղաչեցին պաղատեցան ետեւէն իյնալ աւազակաց, բայց ի զուր։ Ֆռանսացի երկրաչափ մի (M. France) անդ կը գտնուէր նոյն օր, սա եւ միջնորդեց, և ուստի սորա աղաչանաց զիջանելով 15 հեծելազօրք յղուեցան, որք կէս ժամու պտոյտ մ'ընելով վերադարձան ձեռնունայն, միայն բան մի ըրած երեւնալու համար օտարականին։ Յետոյ գիւղացիք միջնորդներու ձեռքով 12 օսմ. լիրա տուին Չէրքէզներուն և եզները փրկանաւորեցին։

Իմացանք թէ Չէրքէզներն ժամանակէ մի ի վեր ձի չեն յափշտակեր եղեր Մանճըլըքէն, և զարմանօք հարցինք պատճառ։ Շատ պարզ պատճառ մի նշանակեցին — ո՛չ ի Մանճըլըգ և ո՛չ ի շրջակայսն այլ եւ ձի կը գտնուի եղեր՝ գտնուածներն բոլոր արդէն գողցուած լինելով։ Ուրեմն ի Թուրքիա, ընդ հովանեաւ Թուրք կառավարութեան, գողութենէ ազատ մնալու ապահով միջոցն է գողցուելու բան չունենալ։

ՈՒԼԱՇ

Յուլիս 14ին հասանք Ուլաշ, զուտ Հայ գիւղ։ Հիւր եղանք Տէր Նիկողոս Ղարակեավուրեանի։ Նշանաւոր գերդաստան մ'է սա։ Տէր Նիկողոսի չորս ուստերքն ամուսնացած լինելով, ամբողջ ընտանիքը քսան անդամէ կը բաղկանայր։ Եւ որովհետեւ Նիկողոս քահանային հօրեղբօրորդին ալ իւր հետ ի միասին կը բնակէր իբրեւ մէկ ընտանիք, և սա ալ 20 անդամ ունէր, ողջոյն Ղարակեավուրեան տունն 40 հոգիէ կազմեալ էր։ 45 անդամէ բաղկացեալ ընտանիք մ'ալ Խարբերդի Իչմէ գիւղին մէջ ճանաչած եմ 1874ին, այն է Կիւլէսէրեան ընտանիքն, 6 եղբայրներ ի միասին հանդերձ զաւակօք և թոռամբք։

Ահաւասիկ ինչ որ Տէր Նիկողոս պատմեց մեզ։ Սուլթան Մուրատ, յերթալն ի Պաղտատ 100 հազար զօրօք՝ մեր գիւղին մօտ իջեւաներ է. իմ նախնին հարուստ եղած է այն ատեն, ուստի նախանձոտներ Սուլթանին մատներ են զնա իբր թէ տէֆինէ գտած լինէր։ Սուլթան Մուրատ կը հարցնէ «Ղեարակեավուր, դու տէֆինէ՞ գտած ես»։— «Այո՛, վեհափառ Տէր։»— «Բեր հոս» կը հրամայէ Սուլթանն։ Մեր մարդն ալ կ'երթայ բոլոր երկրագործական գործիներն սայլի մի վերայ կը բեռցունէ կը տանի Սուլթանին։ Սուլթանն և սպայք կ'ըսպասէին տեսնել ոսկի. ուստի արքայն զարմանօք կը հարցնէ. «Ա՞յս է տէֆինէն.»—«Այո՛. Տէր իմ կը պատասխանէ Հայն, այն է իմ տէֆինէ և իմ յաջողութեան գաղտնիք— ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ և ԵՐԵԿՈՅԻ ԳՈՐԾՆ ՎԱՂՈՒԱՆ ՉԹՈՂՈՒԼ։» Սուլթանը կը հրամայէ որ ջրոյ ըմպանակին վերայ արձանագրեն այս խօսք։ Կ'երթայ Պաղտատ, և նոյն օր կը զարնէ քաղաքն։ Յետոյ կը հասկանայ որ եթէ վաղուան թողած լինէր, ամեն կողմէ հաւաքուող զօրաց ահագին դիմադրութեան պիտի հանդիպէր. և քանզի ըմպանակին վերայ նշանակուած խօսքն կարդալով այն օր փութացած էր ի պատերազմ, մեծապէս երախտապարտ կը զգայ ինքզինք Ղարակեավուրեանին և հրովարտակաւ ազատ կը կացուցանէ զնա յամենայն տրոց։ Բաց այսի 100 քիլէ գարի տարեկան թոշակ կը սահմանէ։ Այս երկու մենաշնորհք կը յարգուէին մինչև 40 տարի առաջ, Հայր Նիկողոսի օրով իսկ, երբ պատրուակաւ մի կառավարութիւնն փոխ կ'առնու հրովարտակն, և այլ եւս չվերադարձուներ, և այսպէս կը զրկուին Ղարակեավուրեանք իրենց դարաւոր մենաշնորհէն։

ՍԵԲԱՍՏԻԱ

Յուլիս 15ին հասանք ի Սեբաստիա, քաղաք 8,000 տնով։ Առատ փայտ, առատ ջուրեն և առատ փոշի կը գտնես անդ։ Պտուղ շատ մի խնդրեր։

Նշանաւոր է Ս. Նշանայ վանքն։ Մեր այցելութեան պահուն բացակայ էր վանահայրն որ միանգամայն առաջնորդն էր Սեբաստիոյ. տեսանք սակայն վանուց երեք եկեղեցիներն ու հնութիւնքն։ Երեք եկեղեցեաց մին շատ մեծ է, միւսն միջակ և երրորդն շատ փոքրիկ։ Երեք նորընծայ վարդապետներ ա՛յն ինչ ուխտած էին ցկեանս մնալ վանքին մէջ և... ուսել։ Ս. Նշանայ վանքն շատ հարուստ է հողով. 200 քիլէ սերմ ցանելու հող ունի։ Բայց մի հարցնէք թէ ազգն ինչ օգուտ կը վայելէ այդքան հողէ և այդպիսի վանքէ։ Մեր վանքերու խնդիրն ազգային ներքին այն մեծ խնդիրն է յորում մեր խեղճութիւն և անկարողութիւն յայտնուած է և կը յայտնուի։ Մենք աղքատ ազգ մ'եմք կ'ըսեմք, կը գանգատիմք թէ միջոց չունիմք։ Բայց մեր վանքերն հարիւրներով կը համրուին որոց ամենն ալ առաւել կամ նուազ հողատէր են։ Դոքա ազգային հարստութեան հանքեր են, որոցմէ օգտիլ չեմք գիտեր։ Վանքապատկան հողերն ու հարստութիւնք բաւական են Միացեալ Ընկերութեանց նման 100 ընկերութիւններու եկամուտն տալու ազգին, և այլ և այլ կարգի հարիւրաւոր վարժարանօք օժտելու Հայ ժողովուրդն։ Ճշմարիտ է թէ հայաշատ գաւառաց զեղծ վարչութիւնն և անապահովութիւնն մեծ արգելք է վանքերն ծաղկեցունելու, բայց պէտք է խոստովանիմք նաև թէ այս բաւական չքմեղանք չէ մեզ, քանզի փորձն ցուցած է թէ երբ կարող և կամեցող վանահօր ձեռքն անցած է վանքի մի ղեկն, հոն անակնկալ արդիւնքներ յառաջ եկած են ի հեճուկս ամենակերպ արգելքներու։

Ոմն, որ վարդապետ լինելու համար Ս. Նշանայ մէջ ժամանակ անցուցած էր, պատմեց ինձ անասելի բաներ վանքին միաբաններուն գնացից վերաբերութեամբ, յորմէ կը տեսնուէր թէ վանք մի որպիսի բարոյական փտութեան կեդրոն կը լինի եթէ չըլնեմք զայն լուսոյ վառարան։

Սեբաստիոյ մէջ երիտասարդաց բազմութեան մի ատենախօսեցի զօրութեան բարոյական սկզբունքներուն վերայ։

ԱՄԱՍԻԱ

Թոքաթի մէջ միայն գիշեր մ'անցուցինք, և որքան կարելի էր մի քանի ժամու դիտողութեամբ տեսնել, այդ քաղաք աւելի յառաջադէմ կը թուէր քան զՍեբաստիա։ Յուլիս 23ին տեսանք Ամասիա, հին քաղաք, բազում պատմական յիշատակօք։ Բերրի է Ամասիա։ Գլխաւոր բերքերն են խնձոր, ճէհրէ և մետաքս։ Նախորդ տարին 4 հազար սնտուկ խնձոր յղած էին ի Կ. Պոլիս, քաշն 5—10 դահեկանի կը ծախուի. Շերամարածութեան անցեալ յաջող տարիներուն մէջ տարի կը լինէր յորում 100 հազար քաշ մետաքս կ'արտադրէր այս քաղաք և կ'ընդունէր 4 հազար օսմ. լիրա. բայց ապա շերամարուծութիւնն այլ եւս չյաջողելով առաջուան պէս և մետաքսին գինն ալ իյնալով, այդ աղբիւր չորնալու միտած է։

Ամասիայի ժողովուրդն պարտէզներու շնորհիւ դիւրին ապրուստ ունենալով ուրիշ ճարտարութեանց և վաճառականութեան փոյթ ունեցած չէ, այլ զբօսասէր, ուստի խմող եղած է։ Եթէ ազգային կարող գործիչներ գտնուէին անդ, անտարակոյս այդ բարեբաղդ պայմանաց մէջ կարելի պիտի լինէր իրագործել շատ նշանաւոր յառաջդիմութիւն կրթական։ Փորն կուշտ ժողովուրդ մի այն պայմանաւ միայն զեղխութենէ և վատթարումէ կը պահուի երբ նորա մէջ բարոյական անօթութիւն և յառաջդիմութեան ծարաւ յառաջ բերող մշակներ գտնուին։

Ամասիոյ երիտասարդաց ատենախօսեցի «Զգայնութիւն և Սկզբունք» նիւթին վերայ։

ՄԱՐԶՈՒԱՆ

Մարզուան կըսուէր լինիլ 4500 տնով քաղաք։ Այցելեցինք օրիորդաց վարժարանն և գոլէճն, որոյ բնագիտական և այլ գործիներն միայն կրցանք տեսնել, քանզի ամառուան պարապուրդի միջոցին պատահեցաւ մեր այցելութիւն։ Գօլէճին ուսուցչապետ Թումայեանն ճանաչեցինք, որ Զուիցերիա ուսած շատ կարող վարժապետ մ'է։ Գիշեր մի միայն անցուցինք այդ քաղաքի մէջ, և հետեւեալ առաւօտուն մեկնեցանք դէպ ի

ՍԱՄՍՈՆ

12 հազար բնակչօք նորափթիթ քաղաք մ'է Սամսոն։ 400 տուն Յոյն կայր անդ, բայց կարի հոյակապ եկեղեցի մի կառուցած և ահագին վարժարան մ'ալ կառուցանելու սկսած էին(Յուլիս 1886։) 150 տուն Հայ կայ, և շատ պանդուխտ։ Ծովեզերեայ ուրիշ քաղաքներու առաւելութիւններն ու վտանգներն անդ եւս ակներև էին։ Ողբալի բաներ լսեցինք անդ հանրային բարուց ապականութեան նկատմամբ։ Հոն ալ ատենախօսելու առիթ մ'ընծայուեցաւ մեզ, և խօսեցանք «իմաստուն յիմարութեան» վրայ։

Օգոստոս 4ին հասանք ի Կ. Պոլիս։ Զունիմք աստ պատմել թէ ինչեր տեսանք անդ, և թէ ինչու և ինչպէս բարեխնամ կառավարութեան հովանիէն խոյս տալով ստիպուեցանք փախչիլ մինչև Ամերիկա։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 25 Ապրիլ 1892

Սիրեցեալ Խմբագիր,

Ձեր մեղուաջան խմբագրութեան ներքև հրատարակեալ ազատաշունչ լրագրի վերջին թուոյն մէջ «Հայաստան և Հայ Գաղթականութիւնք» խորագրով յօդուած մի կարդացի, յորում ի մէջ այլոց նշանակուած էր հետեւեալ պարբերութիւնը։ «... արդ ի՞նչ վիճակի մէջ են իւր ուժեր, և ո՞ւր են իւր իմաստուն առաջնորդք։ Թ... կառավարութիւնն հայաշատ գաւառներէն հեռացուցած է աչքի զարնող առաջնորդներն և ուսուցիչներն և յետին խստութեամբ կը հսկէ երկրորդ կարգի կարողութիւն ունեցողներուն վրայ։»

Այդ հեռացուցուած առաջնորդներուն մէջ նշանաւոր հանդիսացեալ է Եզնիկ Եպիսկոպոս Ապահունին. որուն վրայ խիստ շատ բան կայ գրելու եթէ տեղ և ժամանակ լինի։ «Ապահունի» իրաւ ապահ և արի առաջնորդ մ'է եղած Արաբկերի մէջ, և իւր աներկիւղ ոգւով ներշնչած է բոլոր այն գաւառ։ Եթէ անոր պէս տասն եկեղեցական ունենայինք հայաշատ գաւառներուն մէջ, այսօր տարբեր ժողովուրդ մը կ'ունենայինք և տարբեր լուրեր կը լսէիք և դուք։ Տիգրանակերտ զրկուեցաւ իբրև տեղապահ, Խարբերդէն անցաւ իբրև հուր և Տիգրանակերտ հասաւ իբրև հրդեհ. Նորա բանք և ներկայութիւն հուր կը ձգեն ամեն տեղ։

Եւ այժմ, ահա այդ հուր ինքզինք կ'այրէ Պոլսոյ մէջ, իւր տան մէջ փակուած։ Տխրութիւն, հոգ, նիւթական անձկութիւն, բազմանդամ ընտանեաց պէտք՝ ծանրացած են Եզնիկ Եպիսկոպոսի վրայ, և նորա աշխոյժն ու եռանդն կը սպառեն։ Բան մը որ ամեն իրազեկ ազգայնոց և նոյն ինքն Եզնիկ Եպիսկոպոսի վրայ մասնաւորապէս տխուր ազդեցութիւն կ'ընէ, այն է թէ Պատրիարք Աշըքեան մինչև իսկ հոգեւոր պաշտօն, վեղար և փիլոն զլացած է ի նմանէ, և երբ եկեղեցի դնայ աշխարհիկ դասակարգէ անձանց շարքին մէջ կը մանէ աղօթել։ Կառավարութիւնը կը հարստահարէ, գոնէ նա օտար՝ է, այլակրօն է, կը հասկնանք. բայց Պատրիարք հօր այս տեսակ հարստահարութիւններուն ի՞նչ ըսենք. տիրող կառավարութեան հաճելի ըլլալու համար իւր փոխանորդ մըն այսպէս նեղելուն ի՞նչ ըսենք, այս ո՛րքան ցաւալի, ամօթալի բան է։ Եզնիկ եպիսկոպոս ի՞նչ ըրած է եկեղեցւոյ դէմ որ անկէ զլանանք հոգեւոր պաշտօն կատարելու արտօնութիւնը. և ի՞նչ միջոց ունի նա ապրելու։ Ի՞նչ յանցանքի համար պէտք է չքաւորութիւն կրէ նա և իւր ընտանիքը։ Անո՞ր համար որ իւր խնամոց յանձնուած հօտին կենաց հացն ջամբե՞լ գիտցած է։

ՔԱՋԱՋ

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ

Խարբերդ, 14 Ապրիլ 1892

Արաբկերցիներ յաքսոր զրկուեցան։ Այս աքսորուողներն գրեթէ ամենն ալ քաղաքին երևելիներէն և հարուստներէն են։ Եկաւեան Մար. Աղա, Քէնտիրճեան Մաթէոս, Ճանիկ են։ Պատճառը յայտնի չէ։ Սաչափն յայտնի է թէ Արաբկերցիք, Թրքերուն հետ համաձայնած հանրագրութեամբ դիմած էին Բ. Դրան և կառավարական խստութեանց անտեղութիւնն բացատրած էին. այդ թղթի օրինակներն յղած էին նաև Մեծ Պետութեանց։

Միջադէպ մը առիթ տուաւ որ հօս, Խարբերդի Մէզրէին մէջ, Մկրտիչ Տ. Ստեփանեան և Փայրիքաթար Գրիգոր Աղան 20 օրէ ի վեր բանտն են։ Պատճառը ոչինչ բան մ'է։ Փոսթային կառապանին և իրենց մէջ պատահած կռիւ մը։ Զրպարտուեցան իբր թէ «սինէ ռէօյմիշ» են եղեր։

Փոստախանէի պատահարն ալ բաւական յուզում պատճառեց։ Միլազըմ մը կար, որ շահու ճամբայ մը գտած էր. այն է հասարակութեան նամակներն պատռել (կնքուելէն առաջ) և վրայի մէկ ղուրուշի փուլը գրպանը նետել։ Վերջ ի վերջոյ գիտցուելով՝ վռնտուեցաւ։

Հարստահարութեանց և թշուառութեանց դէպքերը անընդհատ կը յաջորդեն իրարու։

ՍԱԿՈՒՆԻ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— Թուրք զօրաց և յոյն հովիւներու միջև սահմանագլխոյն վերայ կռիւ մի պատահած է, ինչ որ ամեն տարի մի քանի անգամ տեղի կ'ունենայ, և երկու կողմէն ալ երկուական հոգի սպաննուած են։ Թուրք զինուորք մի քանի ոչխար յափշտակած տարած են։ Հելլենական կառավարութիւնն ներկայացում մ'ըրած է Բ. Դրան։

— Տիգրանակերտի Փռանսական փոխ-հիւպատոսն Իսկէնտէրունէն դէպ ի Հալէպ ճամբուն վերայ աւազակներէ յարձակում կրելով իրեն ընկերակցեալ զապթիաներուն մին վիրաւորուած է։ Փոխ-հիւպատոսն ողջ առողջ հասած է ի Հալէպ։

— Կարնոյ անգղիական հիւպատոսարանի թարգմանին տունն գողեր մտեր և բազում արժէքաւոր բաներ տարեր են։ Գողերէն երկուքն ձերբակալուած են։

— Կ. Պոլսոյ իրաւագիտական վարժարանէն այս տարի շրջանաւարտ եղած են 13 Հայեր։

— Քիւրտ հեծելազօրաց Խազախ ձիաւորներու կերպերն սովրեցունել որոշած է կառավարութիւնն, ուստի երեք սպաներ ի Բեդսպուրկ կը յղուին որպէս զի խազախներու մարզանքն ուսանին ու վերադառնան ծառա-

յելու Համիտիյէ հեծելազօրայ մէջ։ «Համիտիյէ» քուրդ հեծելազօրայ անունն է։

— Ի պատասխանի իտալական կառավարութեան մէկ ծանուցագրին որ կ'ասէր թէ Ապպաս Փաշայի հրովարտակն ոչ իւիք կ'եղանակաւորէ Իտալիոյ կացութիւնն ի Մասուա, Բ. Դուռն յայտարարած է թէ իւր նախկին բաղդոյ վերայ կը մնայ՝ վերապահելով Սուլթանի վեհապետական բոլոր իրաւունքն։

— Բագուէն մեզ գրում են. «Մեր եկեղեցու ծխականները վճռել են խնդրամատոյց լինել թէ՛ մեր առաջնորդին և թէ՛ ս. սինոդին՝ թոյլ տալու Պ. Կարա-Մուրզայի երգեցիկ խմբին պատարագի ժամանակ եկեղեցում երգելու։ Ծխականները վճռել են 600 ռուբլի տարեկան նշանակել որպէս վարձք երգեցիկ խմբին։»

(ՄՇԱԿ)

— Վ. Փափազեանի մէկ նոր աշխատասիրութիւնն հրատարակուած է «Սասունցի Օհան» անունով, նիւթն Տաճկահայոց կեանքէն առնուած է։

— Սուլթանն Զատկի առնին առթիւ 400 լիրա նուիրած է Հայոց Պատրիարքարանին և 700 լիրա Ցունականին.

— Պատրիարք Աշըգեան Մաղաքիա եպ. Օրմանեանի և Տիգրան Էֆ. Կիւմիւշկէրտանեանի համար երրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան ստացած է Սուլթանէն։ Դոքա Կ. Պոլսոյ թեմական պատուիրակներն են կաթողիկոսի ընտրութեան համար։

— Տէյլի Նիւզ և այլ լրագիրք լուր մի հրատարակեցին իբր թէ Կարապետ անուն Հայու մի տունն խուզարկելով ի Բուռչուք պուլկար կառավարութիւնն գտած է 14 ռումբեր ուժանակով և կրկաթի կտրներով լեցուն։ 15 հոգի ձերբակալուած են Բուռչուքի մէջ, որոց նպատակն է եղեր Սուլթանն և Ֆէրտինանտ իշխանն սպանել։

Անշուշտ թշնամիք ոմանք ուզած են մատնակից ցուցնել Հայերն այդպիսի դաւակցութեան մի Սուլթանին և Ֆէրտինանտ իշխանին դէմ։

— Հայկ. Միութեան Մայիս 7ի նստին մէջ Տի. Փ. Այվատեան խօսեցաւ «Թղթակցութեան» վերայ և լաւ խօսեցաւ։ Ինքն ամերիկեան վաճառականներու մէջ գրագրի պաշտօն վարած լինելով փորձառու է այս երկրի թղթակցական կարուկ և արագ կերպերուն։ Նոյն իսկ ձեռագրի ամերիկեան ձեւն այն է ինչ որ շատ արագ և գրիչն թղթէն չբաժնելով կրնայ գրուիլ։ Ս. մի գրելու համար (անգլիերէն) երեք շորս գիծեր երեք շորս անգամէն գծել ապօրէն բան է որպէս կ'ընեն կամ կ'ընէին ի Պոլիս և յԵւրոպա։ Գլխագիրն պէտք է գրուի գրչի մէկ հարուածով։ Արագութիւնն ու համառօտութիւնն յատակութեամբ հանդերձ՝ կարեւոր պայման մ'է թղթակցութեան։ Տի. Այվատեանի առաջին վաճառական թղթակցութիւնն ջերմոցի նիւթի վերաբերութեամբ էր. այս ինչ նիւթէն ունի՞ն և ինչ գնով կը վաճառեն՝ հարցած էր։ Նամակն ետ եկաւ. մեր գրագիր վախցաւ թէ գուցէ չեն հասկցած նամակն. բայց այնպէս չէր, նամակի միւս երեսին վերայ շորս հինգ բառէ բաղկացեալ պատասխան մի կար գրուած։ «Այո, ունիմք, քաշն 5 սէնթի կը վաճառեմք» Այսչափն հերիք էր, մինչդեռ Արեւելեան կերպիւ պէտք է գրէր. Խեծ. Տէր, ընդունեցանք ձեր...թուակիր պատուական նամակը որով կը հարցնէք թէ...ևն ևն։

Տի. Թաւշանճեանի ևս նոյն երեկոյի ճառն օգտակար և հետաքրքրական էր «Խօսակցութեան քաղաքավարութեան» վերայ։

Մայիս 21ի նստին մէջ պիտի խօսի Տի. Տիոնեան դրամ շահելու կերպին վերայ։

—Հայր Ղեւոնդի և երկու զէյթունցւոց պատկերն գալ թուով կը հրատարակեմք Զէյթունի պատմութեան հետ։

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Մայիս 10 թուակիր հեռագիր մի կ'ըսէ թէ Մեծ Եպարքոսն իմաց տուած է Սուլթանի ազգականաց թէ Նորին Վեհափառութիւնն ծանր ջղային հիւանդութենէ մի բռնուած է, և թէ անկարելի է այլ ևս ճշմարտութիւնն ծածկել։

—«Նոր Դար» կ'իմանայ թէ Հանրային Կրթութեան Նախարարն Ռուսիոյ համալսարանաց վարչութիւններուն հրահանգ տուած է ոչ-քրիստոնեայ ուսանողաց թոշակ և պարգև չնշանակել և ոչ ալ ազատ կացուցանել ուսման վճարից։

— Բ. Դուռն պահանջած էր հելլենական կառավարութենէն որ հայ յեղափոխականներն արտաքսէ Աթէնքէն, բայց սա մերժած էր խնդիրն։ Այժմ կ'ըսուի թէ Բ. Դուռն կը սպառնայ Յոյներն արտաքսել Իզմիրէն։

—«Զինուորագրութիւնը կ'ըսէ ԱՐԶԱԳԱՆՔ ԿԱՒԿԱՍԷՆ առնելով, հարկաւ սկզբում իբր մի ծանր պատուհաս ընդունեց ժողովուրդը, սակայն շատ շուտով թէ՛ ժողովուրդը և թէ՛ նորակոչ զինուորներն սկսան սիրով վերաբերուիլ ռուս կառավարութեան այդ շնորհին, որ վարժեցնում է տեղացիներն անձնապաշտպանութեան։ Այս համեմատաբար կարճ միջոցում տեղացի երիտասարդներն այնպիսի ընդունակութիւն ցոյց տուին զինուորական արհեստն իւրացուցանելու, որ սպայք և մեծաւորք առ հասարակ խօսք չեր գտներ իրենց գոհունակութիւնը յայտնելու այդ մասին։ Տեղացի զինուորը կը պարծի իւր կոչմամբ, մանաւանդ Հայ գիւղացին որ ազնիւ է, աշխատասէր, բարոյական, չխմեր։ Իրեն ամենալաւ կողմն ցոյց տալու ցանկութիւնը հաւատարապէս զօրեղ է բոլոր հայ զինուորաց մէջ։ Հայ զինուորը ամեն կերպիւ կ'աշխատի իւր մեծաւորին հաճոյանալ։ Բաց յայս բոլորէն Հայը ճարպիկ է, հասկացող և աշխոյժ։

— Ռուսահայ Մեծ. Տիար Աւետիս Ղուկասեան անցեալներ ահագին գումար մի կտակեց հայ կրթական և կրօնական հաստատութեանց համար. 150 հազար ռուբլի, որ նաւթային ընկերութեան մի մէջ իւր բաժինն է, պիտի մնայ մինչև որ 400 հազար ռուբլիի գումարին հասնի շահերովն, և յայնժամ այդ գումարով վարժարան մի պիտի հաստատուի հաստատուն եկամտաբ։ 30 հազար ռուբլի կտակեց Բագուի մէջ եկեղեցի մի շինուելու համար, 20հազար՝ր. նոյն քաղքին Մարդասիրական Ընկերութեան, 5 հազարական ր. երկու վարժարանաց, 15 հազար ր., որոյ եկամտով երկու սանունք պահուին Լազարեան ճեմարանի մէջ։

Ուրիշ Ռուսահայ մի, Մեծ. Տիար Բէգլար Տէր-Բարսեղեանց, Կողբ գիւղի ս. Աստուածածին եկեղեցւոյն այլ և այլ իրեղէններ և զանազան զարդեր նուիրելէ զատ, շինած է մի կամուրջ 500 ռուբլի ծախիւք, և իւր երկու որդւոց հետ խորհրդով և մի երիտասարդի օգնութեամբ յանձն առած է դպրոց մի կառուցանել։

Ուրիշ Ռուսահայ մի, Մեծ. Տիար Գէորգ Փրիտոնեանց, 5 հազար ր. կտակած է Տփղիսի Ներսիսեան Դպրանոցին, 10 հազար ր. ընտրելի կաթողիկոսին պիտի յանձնուի կրթական գործի համար, և դեռ 7,500 ր. ևս ուրիշ ազգային հաստատութեանց։

—Երիտասարդաց Քրիստ. Ընկերակցութեան գրոց մեծ թարգմանին մէջ յանկեան 4րդ Էվինիւի և 23րդ փողոցի, կը գտնուին հետևեալ հայերէն գրքերն և թերթերն, զորս կրնան Հայեր երթալ կարդալ։—

Սիսուան	Հայր Ղ. Ալիշանի	
Այրարատ	,,	,,
Շիրակ	,,	,,
Գրաբար Աստուածաշունչ		

Արուեստ Ատենախօսութեան Մ. Ս Գաբրիէլեանի
Լ'Առմէնի-Արմէնիա
Հայք

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի. Կիւլլապի Ս. Կիւլպէնկեան,

53 Cedar St. N.Y.

HAGOPIAN

PHOTO-ENGRAVING CO.

3 Great Jones St. New York

Engraving for all purposes of

illustration in line & half-tone.

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն։
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

L'ARMENIE-ARMENA

Անգլիերէն և Ֆրանսերէն ամսաթերթ երկլեզուեան
Տարեկան բաժնեգինն է 2 թալէր և կէս կամ 12 Ֆր և կէս
Խմբագիր M. TCHE'RAZ

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԶԱՐԱՆ

(Ձափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարզարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է գինուորական մարզանաց և մարմնամարզական սկզբանց։

Գինն որևէ հասցէի համար մէկ թալէր կամ հինգ ֆրանք։ Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 զեղչ կը լինի։ Կրնայ առաջուիլ «ՀԱՅՔ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետևեալ հասցէով,
G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ տարազին հանդերձեղէնի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան։

ԱՒԵՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենէն ապահով և աժան գըներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պալուոյ վրայ, և փարա կամ Թիքէթ խրկել Մարսիլիա։

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճաբոնական ամեն տեսակ ապրանքներ։

Ծանօթութիւն. Գործերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք։ Մեզ գրել հետևեալ հասցէիւ

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

P. SHALJIAN
9 SPRUCE ST. NEW YORK
ԳՐՔԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆՔ
ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ
ԿԱԶՄ ԸՆՏԻՐ

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԴԵՂԱԳՈՐԾ
(Հաստատեալ ի 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

MARK F. COSGROVE
ԿՕՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ՐԸՊՊԸՐՆԵՐ
78 Front St., Corn Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կօշիկներ մոյկեր, և կաշիկէ ըըպպըրներ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգլիերէն տետր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի։ Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու։

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. դիմել հեղինակին հետևեալ հասցէիւ — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa. U. S. A.

— «ՀԱՅՔ»ի 1891 տարին ամբողջ կազմուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ